ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 14» սեպտեմբերի 2018 թ. N 211-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով՝

կարգադրում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Ս. Քոչարյանցի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով դպրոցի ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Արամ Խաչատրյան - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ, նախագահ

Նելսոն Սարգսյան – Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ

Բուրմունք Հովհաննիսյան –Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնմագետ

Մանուշ Խոնոյան - հանձնող

Գայանե Ղարիբյան - ընդունող

Սիրանուշ Մազմանյան - դպրոցի հաշվապահ

2. Հանձնաժողովին՝ /նախագահ՝ Արամ Խաչատրյան/ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև դպրոցի նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ի. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ք.Գավառ